

ԱՎՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12
Տարեկան	6
Վեցամսեայ	3
Արտասահմանի համար տարեկան	15
Վեցամսեայ	8

Ամերիկայի համար	3
Տարեկան	1.50
Վեցամսեայ	0.75

Իրանացի սուրբ սուրբիկ երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ. է. երեսին մեջի սանթիմետր համար 20 0/0 զեղչ կըլ լայն:

Վառնայի համար ձևի 40 սանթիմ

# ՉԱՐՔՈՒՄ

ՄԱՐԿԻ ԱՉԳԱՏՆԵՐ ԲԱՂՄԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՈՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԻՆՈՒԹԻ ԵՒ ՇԱՐՋՄՅՈՒՄ ԵՒ ՎԱՐՆԱԿ ՎՃԱՐՆԵՐ

Նախկին և նոր գրիկի, իմպրոպրիանու հասցիքն.

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձևի ( 20 ՍԱՆԹԻՄ ) Պուշկարիոյ համար ձևի ( 15 ՍԱՆԹԻՄ )

Գրութիւնք և ս յն սրուիք

«ՇԱՐՔՈՒՄ»-Ի ԲԱՎՃԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՃԱՆԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՆԱԿ ՎՃԱՐՆԵՐ

## ՎԵՐՋ ԱՅՍ ԳՐՈՒԹԵԱՆ

Կարապը կանուխէն կըզգայ իր մեռնիլը և կ'երգէ անոյձ, մեյրախական մահերգ մը: Այսպէս ներքայնակ մահով մեռնիլ չուզիր Հնչակեան կուսակցութիւնը, որ գտնէ ձգէր յարգելի յիշատակ մը, ընդհակառակը երկպառակած, հատուածներու բաժնուած և եղբայրասպան ոճրագործութիւններով իրարու դէմ լարուած կ'ուզայ նա այսօր, իր կեանքի վերջին օրերուն մէջ, աւելցնել թշուառ հայ ազգի զժառանգութիւններու թիւը ու ձգել պատմութեան մէջ սեւ էջեր:

Համառոտակի փաստներ մեր ըսածները:

96ի պառակտումէն վերջ տխրահունչակ Պարտոզը առաջարկեց նոյն իսկ հաշտուիլ Սուլթանին հետ: «Հնչակ» թէեւ տրամադրութեամբ յեղափոխական, բայց հարուածի ծանրութեան տակ հաշտանդամ էր եղած:

Հնչակեան հասկցող և յեղափոխական տարրը տեսնելով մեծ անկումը ստուար խումբերով մտաւ Հ. Յ. Դաշնակցութեան դրօշին տակ — կազմակերպութիւն մը, որ ըստ ժամանակի պահանջին դրուած զուտ ազգային և յեղափոխական հիմքու վրայ, յաղթական և զօրեղ արտայայտութիւններով հրապարակը արդէն գրաւեր էր: Այստեղ թող ներուի մեզ փակագիծ մը:

Ընթերցողը մեր դատողութիւններուն ու է սխալ մեկնում չտալու համար, կարող է գիտնալ, որ այսօր այս անողորք քննադատութիւնը ընողը այն օրերու թունդ Հնչակեան մըն է:

Հնչակեան կուսակցութիւնը վերջնական քայլարժան դատապարտուած էր: Մեծագործ Պիտութիւնը ու եղբայրացու մը վերջին փորձ մըն էր մահէն խուսափելու համար, սակայն ճար-

ճատու մը, որով նա տապալեցաւ եղաւ ահաբեկի իր բոլոր հետեւանքներով: ու սեղի ունեցաւ երեւոյթներէն ամենէն տխուրը, ամենէն դատապարտելին... Հատուածները սկսան զիրար կոտորել:

Դեռ չէ չորցած Միսոի և Չիթճեանի կուրծքէն վազած արիւնը ու հա հեռագրական թելը լուր բերաւ թէ նազարբէգի վրայ եղած է սպանութեան փորձ, թէ ատրճանակի չորս հարուածներով Սադուհի — հին Հնչակեան կեդրոնի նախագահը — սրտէն վիրաւորուած ու անմիջապէս մեռած է:

Ի՞նչ էր այս բոլորի յանցանքը: Գաղափարի և սկզբունքի տարբերութիւն: Բայց այդ եղբայրասպանութիւնները նիւթողները պէտք է գիտնան, որ սկզբունքի և գաղափարի տարբերութեան համար մարդ սպանելը բարբարոսութեան ու վայրագանկրթութեան նշան է, մինչդեռ կազմակերպուելու վճիռ արձակել կը նշանակէ արդէն իւրացուցած ըլլալ որոշ շփով քաղաքակրթութիւն:

Այս ընթացքը եթէ շարունակուի մեզ կը տանի վերջնական անբարոյականացում և կուենեայ աղետալի հետեւանքներ...  
Ուրեմն վե՛րջ այս գրութեան Մարգարէտեմի

### ՉԱՐՔ ԵՒ ԿԱՐՈՂԻԿՈՍԸ

Էթմիածնէն հետեւեալը կը գըրեն «Լ'Աւանդ»-ի:

Սեպտեմբեր 5ին Թիֆլիզէն ռուս պաշտօնեաները հոս հասան մեր վանքին սեփականութիւնները գրաւելու համար: Երեւանէն 4000 զինուոր և երեք թնդանթ բերել տուին մեր ծերունի Կաթողիկոսը սարսափեցնելու համար: Բայց այնպիսի ընդունելութիւն մը գտան, որուն բնաւ չէին սպասէր:

Վաղարշապատի և իր շրջակայ զիւղօրէից բնակիչները ուզեցին

այս անկող հլւրերուն դէմ ցոյց մը սարքել: Բայց Կաթողիկոսը համոզեց սպանողներով զանոնք որ, ոչինչ չի պիտի յանձնէ ռուս կառավարութեան: Ա՛յ իր խօսքը պահեց:

Կաթողիկոսը նիքուա Ռ. Չարին ներկայացուցիչները ընդունեց իր շքազգեստները հագած և իր բոլոր պատուանշանները կուրծքէն կախած: Պաշտօնեաները հրաւիրեցին կաթողիկոսը որ եկեղեցապատկան կալուածները յանձնէ իրենց, ըստ կայսերական հրամանի: Այն ատեն Կաթողիկոսը կորովի շեշտով մը պատասխանեց:

«Էթմիածնայ սեփականութեան մէկ մասը պարտիկ կառավարութիւնը նուիրած է, մէկ ուրիշ մասը Հնչակուստանի Հայերը, որոնք անգլիական կառավարութեան հպատակներ են, մնացածն ալ հողանտացի կամ հունգարացի և թրքահպատակ Հայերէն նուիրուած են, հետեւաբար չեմ կրնար այս սեփականութիւնները ռուս իշխանութեանց յանձնել: Իսկ ձեր կառավարութիւնը լոկ սա պատուանշանները ընծայած է, զորո կը կրեմ այս վայրկեանս: առէ՛ք ասոնք, որովհետեւ այլեւս չեմ ուզեր կուրծքիս վրայ զանոնք կրել»:

Աս ըսելէն ետքը, հանեց իր ռուսական պատուանշաններն ու սեղանին վրայ շտրեց ապշած պաշտօնեաներուն աւջեւ, որոնք Կաթողիկոսին գիտել տուին թէ կը սխալէր իրենց հետայդ աստիճան վատ ընդունելութիւն մը ընելով: քանի որ անոնք իրենց պարտականութիւնն էր որ կը կատարէին:

«Յե՛տալ, յարեց Կաթողիկոսը, միայն իմ պարտականութիւնս է որ կը կատարեմ, և պիտի կատարեմ մինչեւ վերջը»:

Յետոյ ոտքի ելաւ և Չարին ներկայացուցիչներուն գուռը ցուցուց: պաշտօնեաները մեկնեցան բոլորովին ստորնացած: Հիմայ էթմիածինը 800 զին-

ւորներով շրջապատուած է: Բայց անօգուտ կանխազգուշութիւն, որովհետեւ Հայոց Կաթողիկոսը բնաւ տեղի չպիտի աայ Ռուսիոյ Չարին, եթէ նոյն իսկ ամբողջ ռուսական բանակը էլ միաձնայ վրայ քալէ: Ն. Ս. Օժուլովսկը վճռած է արհամարհել Սիպերիա աքսորանքը և մինչեւ իսկ մահը:

«ՃիկԱՌՕ» ԹԵՐԹԻՆ ՄԱԿԵՒ. ԽՆԴՐՈՑ ՄԱՍԻՆ ԿԱՏԱՐԱՄ «ԲՆՆՈՒԹԻՒՆԸ»

(Շար. Ասխորդ թիւէն և վերջ)

Հիւմի փաշա ըստ էմիլ Պէտի, շքանշան մը շատ աւելի, բան մըն է Մակեդոնիոյ մէջ, փոխարքայի պէս քան մը, որուն իր վեհապետը Թուրքիոյ մէջ մինչեւ այսօր չի սեանուած արտօնութիւններ տուած է. անկախ, ազատ, ամենագոր, Հիւմի փաշա գրչի հարուածով մը հարցեր կը լուծէ. կորսէ, կը հրովարտակէ եւ աւանջն կողմէ հնազանդութիւն կը գտնէ:

Բարենորոգմանց գործադրութեան հսկելու կոչուած ըլլալով, թէ իսաքիւսի եւ թէ Մանասթրի մէջ սքանչելի բաներ ըրած է: Խաղաղաման իր գործը խափանուած է ապստամբութիւնը զսպելու ստիպողականութեան, ինչպէս նաեւ յեղափոխական պետերէն թելադրուած բնակիչներուն դժկամակութեան: «Որովհետեւ, կը գրէ Պ. Պէտ, անոնք բարենորոգումներէ տարբեր բան կուզեն: Անոնք կուզեն թուրքերը տուներն վաճառել եւ անոր տէր դառնալ: Այնպէս որ Մակեդոնիոյ քրիստոնեաներուն վտանգութիւնը շահող աւան միջոց, փոխանակ զիրենք հանդարտեցնելու՝ կը զայրացնէ»:

Կարգ մը թերթեր Հիւմի փաշան Պուլկարներու մեծ կոտորող ներկայացուցին և ուզեցին զայն նկատել իր իր ստորագասներուն բոլոր ուժերներուն պատասխանատու բարձր պաշտօնեան: մինչդեռ ՃիկաՊոի յողուածին մէջ Հիւմի փաշա կը ներկայանայ իբր տէր մը եւ իբր բարենորոգիչ մը, որուն խոշոր ծրագիրներուն գործադրութիւնը յեղափոխութեան պատճառաւ արգելքի հանդիպած է: Թէ՛ առաջին եւ թէ՛ վերջին գիտակետերը հաւասարապէս սխալ են, եւ իրականութիւնը բաւական բարձր է:

Հիմի փաշա պաշտօնեայ մըն է, եւ բարձր պաշտօնեայ մը փաշա մը իրմէ չէ որ պիտի ուզէի խնել այդ տիտղոսը բայց պաշտօնեայ մը վերջապէս. եւ թուրք պաշտօնեայ մը մանաւանդ Այս դրու թիւնը իրեն հետ կը բերէ կարգ մը ստիպողականութիւններ, որոնց անոցին եւ ամենէն բացարձակն է անկախութեան նախաձեռնութեան, ազատութեան կատարելաբար բացակայութիւնը: Այս օրէնքը կայարութեան մէջ բնական նորոգելու համար չէ որ անկէ պիտի խուսափի: Եւ լրջօրէն հետեւեցայ շարախներով Իւսթուպի մէջ իր աշխատութիւններուն. յանձին իր գաղափարներով, մեծարուած ու պատկառելի մարդ մը, որ բնաւ առանց Պրիստ հետազոտելու չէր գործեր: Ինքն փակ կը պարծիր անգործ թուով հետազոտելու որ գործած ըլլալուն: Աստիճաբար, բարենորոգմանց մասին իրեն հետ բարձր ժամանակ տեսակցութիւն մը կը բաւէր համոզուելու համար թէ իր աշխատութեան եղանակը կը կայանար հետեւեալին մէջ. իւրաքանչիւր բարենորոգման գործադրութեան համար մանրամասն պատկերացիք մը կը պատրաստէր, որոնք իրեն կը ներկայացնէր. իր անապատութիւնները Պրիստ մէջ վերաբարձրութեան կենթարկուէին. եւ քաղաքացիները շարախներ կը վերադարձուէին նօթագրուած, փոփոխուած, մեղմացած՝ երբ շատ յանդուրձան երեւցած ըլլային:

Հիմի փաշա չէր ծածկեր այս իրողութիւնը: Անկախ մարդու տեղ չէր դնէր ինքզինքը, եւ ոչ ալ ուր է

ստորնացում ինքզինքին թոյլ կուտար. պարզապէս եւ գրեթէ միամտօրէն կերեւէր ինչ որ էր. Սուլթանին կամքին համաձայն գործադրողը: Արդէն ուրիշ անգ յիշած եմ իր մէկ խօսքը զոր ըսաւ ինձի, Պրիստը ձգելու պահուստ, երբ իրեն կը հարցնէի թէ վերադարձիս պիտի կրնամ գինքը իւսթուպ գտնել: «Շատ կուզէի երթալ, բայց չեմ ձգեր որ մեկնիմ: Ընթերցողը գիւրաւ կրնայ ինձի հետ հետեւեցնել որ քննիչ մը անկախ եղած ըլլար, երբ իր ուզածին պէս իր հսկողութեան սակ գրանուող գաւառները այցելելու կարող չէ:

Ընդհ ընդհին յարաբերութիւնները կուստիպեցրուն հետ, որոնք կերպով չեն նշանակուած: Քննիչը կարգ մը խնդիրներու համար պարտաւոր է վարչերութեան հետ համաձայնիլ. բայց անոնց վրայ ուր է հեղինակութիւն չունի: Երբ հարկ ըլլայ պաշտօնեայի մը փոփոխութեան պէտք է իւրեան հարցնէ. սակայն ասիական չի նշանակել որ իր դիմումը միշտ արդիւնք կուենանայ: Երբ մտադ շիւրի փաշայի պաշտօնին առթիւ արուած հրահանգները կարգայ, պիտի տեսնէ որ ուզուած է լոկ վարչական նոր պաշտօն մը եղածներուն քով առընթերցողը եւ ոչ թէ աւելցնել. արդէն իր քաղաքացիական մշտական մեթոտն է առ այդ մեթոտով վստահ են թէ յիշնչ պիտի չի փոփոխի. եւ միեւնոյն ատեն բարենորոգչի հանգամանք պիտի ըստանան:

Բայց ո՞վ պիտի վստահեցնէ Սուլթանը:

Թանր այս կերպ ըլլալուն, ես լրատուութիւնը մեծ դեր կը խաղայ. Հիմի փաշա ուրիշ ամեն պաշտօնեայի պէս կը լրատուի, Սուլթանի մէկ խիղհարար իրեն կընկերակցի միշտ, եւ ասիական ինքնին կը բաւէ կարծեմ քննիչին անկախութիւնը զգալապէս սահմանափակելու համար:

Ամէն կողմէ կապիտուած, իւրեան ամենախիստ հսկողութեան տակ, առանց վարչիներու վրայ իրական հեղինակութիւն մը ունենալու եւ պատկառելի լրատուած, գիւրաւ ըմբռնելի է որ Հիմի փաշա խիստ պէշ պայմաններու մէջ կը գտնուի լրջօրէն բարենորոգչական գործ մը կատարելու համար: Պէտք է ընդունիլ իր բարձր կամեցողութիւնը, ինք թուրքերու ամենէն ազատամիտ փաշան է: Բարձր այն անձինքը, թուրք կամ ոչ թուրք, զորս հարցաքննելի, գովելի իր վարչական յատկութիւններն ու պարկեշտութիւնը. նոյն իսկ եւրոպական հեղափոխութիւններէն կը յայտարարէին թէ օրիակ անձը որ կրնայ Մակեդոնիոյ մէջ գործել, Հիմի փաշան է»: Սակայն իր գործունեութիւնը ամուլ եղաւ ու չէր կրնար ուրիշ կերպ ըլլալ, եւ եթէ ապստամբութիւնը յետագուած ալ ըլլար, քննիչի անկարողութիւնը նոյնքան աչքի պիտի գործէր: Ան բան մը չէր կրնար ընել, որովհետեւ հոն զովեւեւ էր բան մը չընելու համար, ու պարտաւոր էր ննազանդիլ շնորհագործ ըլլալու համար: Սուլթանը մեծ գիւրադարձ մըն է:

Հարկ չիկայ ըսել որ այս բողոքին մէջ Յիկաուոի թղթակցին միամտութիւնը ամեն տարակոյսէ վեր է: Թուրքերը ճարպիկ մարդեր են, անորոշութեան ու պարզամտութեան խառնուրդը որ զիրենք կը յատկանչէ, մարդը կը խաթէ, ժամանակ պէտք է հասկնալու համար ասիական կը զարմանամ միայն որ մեր պաշտօնակիցը իր ուղեւորութեան մէջ լոկ թուրքերու եւ կատարական պաշտօնեաներու հանդիպելու է: Քանի որ հաս ալ եւրոպացիներու կարծիք թող արուէր, նոյն իսկ Մակեդոնացիներու կայծիքը գանցաւելի չէր կրնար ըլլալ:

Յիկաուո իր քննութիւնը սարաւերով կը ծանուցանէր, միակեղանակաւ խնդրէր, որ օր քան օր աւելի տարածուէր իր կը գտնուէր, միանգամայն աւելի կընտոտ ու մտքի կերպարանք կանէ: Յիկաուո իր ընթացողներուն ճշգրիտ ու պատճառաբանալ կարծիք մը տալու նախաձեռնիցիք, իր աշխատակիցներին մէկուս յանձնարարած է տեղիս վրայ անկեղծ քննութիւն մը կատարել:

Չեմ գիտեր թէ այս հինգ յոգնածներուն ուրիշներ ալ պիտի հետեւին կամ ոչ: Բայց անոնք կը բաւեն հիմնական ճշմարտութեան համար թէ Յիկաուոի քննութեան մէջ ճշգրտութեան եւ անկողնակալութեան պակասը վերադարձական աստիճանին հասած է:

Թերթ մը անչույտ իրաւունք ունի անկողնակալ ըլլալու եւ իր գործերը հասկցածին պէս կարգադրելու:

### ՓՅԵՐ ՈՒ ՎԱՐՊԵՐ

ՆՈՒՆԻՐ Մ. Զ. — ԻՆ  
ԳԼՈՒԽ Գ.

Չէլթուրը ճիշտ է յարթուած, բայց քաջ հոգի անունը բարձրացնող յարթուած եղաւ: Եւստի ու Պետրոսը այլեւս իրենց վստահող ու հայ ժողովրդի ապստամբական ընդունակութիւնների մէջ հիասթափվելու հիմա քստնվող կողմացի ընկերներին հաւատաւ եւ առաջ ներշնչելու փաստերը ունենան ու սկսեցին նոր եւսանալով գործել:

Այդ ետանդը կրկնապատկեցին Պրիստը եւ այլ մի քանի քաղաքներու մտղի ունեցող յանդուգն մեթոդական գործողութիւնները այն ժամանակ, երբ յեղափոխութիւնը թէ ինչ ժողովրդի կ'է թուրք կատարութեան կարծիքով վերջնապէս ընդլայնէր համարվում: Մեծ զորավար եղան եւ այն նամակները, զոր գրուած էին սուլթանական արիւնքով միայնակ ու անկուսն պիտատորները երբեք իտրքերից, որոնց անփափ քովանդակութիւնը գրեթէ հետեւեալն էր:

Այս ասրափը մեծ էր. բայց Սուլթանը իր նպատակին չը հասաւ. կրտորածները չը կարողացան խզել թողափոխական ոգին: Մենք մի ժամանակ կարծեցինք որ սարս փաշար ժողովրդը մեզ յեղափոխականներին համարելով այս գազանախին պատու հասի շարժառիթը. կամ իր ձեռքով մեզ պատատ պատատ կանէ, կամ թէ կատարութեան կը յանձնէ: Բարեբաղդաբար արեւն մէջ լուրացող տեղացի հայութեան մեզ ճա-

նաչող մասը այդ վստահութեան չը հասաւ. Փախչող փախաւ, ոչխարի պէս մորթվողը մորթվեց. իսկ ժողովրդի մէջ աւելի շատացաւ նրանց թիւը, որոնք շատ դառն ու ծանր փորձով համոզվեցին թէ նախ պէտք է գէնք ունենալ եւ ապա այդ գէնքով պաշտպանել կեանքը, պատիւը եւ գոյքը բարբարոս թուրքի դէմ: Այդ եզրակացութեան յանգելու աւելի մղեցին հետեւեալ երեւոյթները. նախ ժողովուրդը տեսաւ որ անգէն պաղատող հային թուրքը աւելի մեծ հաճոյքով է սպաննում. երկրորդ նկատեց որ այն տեղիներում, ուր կարծում էր թէ գէնք եւ դիմադրելու ընդունակ կայիր կային կտտուած եւ թալան տեղի չունեցաւ:

Այս, յեղափոխական ոգին չը մեռաւ: Սուլթանի եւ նրա շնքի արիւնքը ընդհակառակը նա աւելի աճեց. բայց ժողովուրդը տնտեսապէս բողոքով քայքայված է: Նա ոչ միայն իր գրամով գէնք գնել չի կարող, թէև նրա փրկարար նշանակութիւնը այժմ շատ քաւ հասկանում է, այլեւ իր օրւան հացը ճարելու համար մեծ նեղութիւններ մէջ է: Այժմ որ յեղափոխական կայմակերպութիւնները պէտք է ցոյց տան իրենց նիւթական, ֆիզիքական եւ բարոյական ոյժի տէր լինելը, այժմ է որ յեղափոխական պիտատորները ժողովրդին պէտք է ներկայանան իրենց զօրեղ մարմիկ զօրեղ ներկայացուցիչներ, մի անգամ ընդ միշտ նրա սրտին եւ հոգուն տիրանալու համար: Բայց այդպէս էնք ներկայանում մենք ժողովրդին: Ոչ, մենք ոչ միայն գէնք չենք կարողանում մատակարարել մեր դիմադրութեան պատրաստ ընկերներին, այլ շատ անգամ նրանց ունեցած մի կտոր հացին էլ

ընկերանում ենք. մուրացկաններին նման, Այդ գրութեան դեռ առաջ մենք կարող էինք հանդուրժել, որովհետեւ ժողովուրդը տնտեսական այս տեսակ քայքայումի մէջ չէր, բայց այսօր այդ անհարմին է: Մեզ չեն ճշուած վստահները, որոնք ամէն օր պատրաստ են, այլ մեր նիւթական անտանելի վիճակը. մենք փոխանակ մերկ եւ նօթի ժողովրդին օգնականներ ներկայացնելու. նրանց վզին բեռ ենք լինում: Դրամ եւ զէնք հասցրէք մեզ, զրամ եւ գէնք: Առայժմ միայն այդ պիտի լինի ձեր միակ գործը. կատարեցէք այդ եւ յեղափոխութիւնը չի խնդրի: չի մեռնի ու:

Ահա այսպէս էին խօսում երկրի այն գործիչները, որոնք մահը հարիւր անգամ գրկելու բաց էին թողել: Բայց չէին հեռացել այն վայրերից, ուր նրանց գամել էր իրենց գէնքը: Հայրենիքը ունեցած սէրը, պարտականութիւնը եւ վրէժի ծարաւը:

Հայի ապագային ֆատալիտօրէն հաւատացող այս սակաւթիւ յեղափոխական տիպերը, որոնք վերջերս կախաղանի, սրի ու գնդակի բաժին դարձան, արիւնտ սեւ ոճի իր հանդէպ, հարկբարոյներին մահան իրախտոցին առջեւ ոչ միայն չէին զոգում, չէին փախում, չէին հիասթափվում, այլ եւ յոյս, հաւատ ու ետանդ էին ներշնչում իրենց զորքը, ազատ հողի վրայ միացող բնկերներին, որոնք հայի արիւնքի կազմված գեներալ, հազարաորներին ղեկավարին տանջանքների պատմութիւնը լսելուց անգամ վարանում ու վճատում էին:

Ու դրանք էին որ փրկեցին հայ յեղափոխութիւնը. զրանք էին որ իրենց երկաթէ բազուկներով հայ

ժողովրդին գերմարդկային ճիգեր թափելով ետ քաշեցին այն սարսափելի անգուշգի բերանից, որի մէջ նա ընկնել էր ուզում, որի անունն է Յուսահատութիւն, Լքում եւ որի մէջ ընկնող ժողովուրդին այլեւս փրկութիւն չի կայ:

Շեռտեանը, Բոն Պետրոսը եւ իրենց երկու երեք ընկերները, որոնք թէև չուրամ, բայց դեռ չէին լքած կովկասում հայ յեղափոխական գործը. երկրից եկած այդ կոչերից բաւական ցնցվեցին:

Մի օր, Բոն Պետրոսը, իր խնջացնող աշխատութիւնից տուն չը վերադարձել եւ մեքենայաբար, շափազանց յոգնած մարդու անզգայութեամբ, շոյում էր իր ծնկան վրա հեծած փոքրիկ տղային, վաղղիփմ թէ եւ մարմնով յոգնած, թէ եւ ոչ տրամադիր իր անհոգ, եւ հօր սեւ հեղքերին ու ցաւերին անզգայ անմեղ մանկան փայփայանքներին պատասխանելու:

Այդ միջոցին, յանկարծ դուր շրիկալով բացվեց, ներս մտաւ ծերուտեանը սպիտակ կրակին սալով բարեւեալ յետոյ ասաց.

«Ինչ ես էլի թըթվի: Ուրախութիւնը համաձայնվում են երկիր զնայ Պրիստից էլ լաւ չուրեր կան: Այնտեղ մեծ պատրաստութիւններ զրամ են, նրանք արդէն սկսել են խոշոր գումարներով զրամ հանգանակել եւ բաւական յաջողակ կերպով, Գրամ են որ աշխուս այս կողմից զրամ չեն ուզում: Իրենք կարող են իրենց զրամը հայթայթել: Մեզինց միայն գէնք եւ ուժանակ են ուզում»:

(Շարունակելի)

բերու. բայց այս պարագային, զէթ թող պարկեշտութիւնն ունենայ իր անկեղծութեան մասին մեզի չի խօսելու:

Մոնիս Քան

ԿԱՐՄԻՐ ՍՈՒԼԹԱՆԻՆ ԴԷՄ

(Լ. Օնոնեհ)

Անդրիոյ, Յրանսայի եւ Իտալիոյ հայաստան քովի կենտրոն կազմակերպած միջազգային միջոցառումներուն նպատակն էր բողոքել Հայաստանի եւ Մակեդոնիոյ ջարդերու դէմ, եւ երկու կողմէն դաշինքներու շարժումներու մասին անդադրեալ խօսակցութեան գործընթացը սկսելու: Երկու կողմէն կարող հասարակաց կարծիքի յստիչում մը թելադրել, սեղի ունեցաւ հոգ: ԶՅԻՆ, կէս օրէն ետքը Ստան Գեորգի թարգմանի մը, Այս միջոցին կարող եւ տպագրել զոչ մըն էր ներկայիս թիւին մեծութեամբ, ատենախօսներու օտարազգի ու կարեւորութեամբ եւ զայն ընդհանրապէս ստատայստուցանք քաղաքացիական շարժումներու մը: Մասնաւոր պարագայ մը այս հարցման արժեքը կը մեծցնէր. տարածելով, եթէ կարելի է ըսել, իր նշանակութեամբ հաւաքման զխառնուրդ արարկան եզրու վաւարներ խնդիրներէն ալ անդին: Անգլիական ու իտալական պատերազմներու դրամային կը շեղմարուէին, Ապստիլ Համբոյի զոհերուն ֆրանսացի պաշտպաններու աւերակներ, ու այս մերձեցումը, որ բնաւ ընդհանրապէս չէր, ժողովին ներքինը նոր երեւակ նիզակազմութեան մը պատկերը, որ կարգուած ըլլար արեւմտեան Երկրայի երեք ազատական մեծ ազգերու միջեւ, ի պաշտպանութեան քաղաքակրթութեան եւ մարդկային իրաւունքներու: Ատենախօսները չի սխալեցան այս ընդհանուր յոյսին վրայ ծանրանալով եւ բոլոր սրտերու մէջ ապագայ

խոստմանը քաղաքակրթութեան մը տեսիլը ծնող խանդավաղութիւնը արժարեւելով: Հասարակաց կարծիքին միանգամայն խիստ յանդուգն եւ ամենանորը գիւտանգէտներէն աւելի խոհեմ, երկար ատենէ ի վեր Անգլիոյ, Իտալիոյ եւ Յրանսայի մէջ նախապատրաստած հաշտութեան պատշաճական ստանալովութեան հետք, այս երեւակ ժողովուրդները, ԶՅԻ հաւաքման մէջ զիրենք ներկայացնող երեւելի մարդոց ճայնով, կարծես հանդիմանութեամբ ճշգրտելու այս նորագոյն համաձայնութեան գործնական անդրանիկ արդիւնքը, եւ փորձեցին ազատել զայն նախապատրաստական քաղաքակրթութեանց մասը շրջանէն: Այս ատենակետով այս միջոցառումն սխիւտիկին մէջ արտասանուած խօսքերն ու անոնց նետերը ծափահարութեանը, անվերջ կրեց արձագանքը պիտի գտնէին բոլոր Երկրայի մէջ, եթէ նոյն իսկ մայրաքաղաքի այս խնդիրը, որուն կապուած է ան, ինքնին այս ժամուս ամբողջ քաղաքակրթութեանը իր նշանակութեամբ իր վրայ ստիպողագէտ կեդրոնացուցած ըլլար: Ժամը ԶԻՅԻՆ Գ. Բրէստանտէ բնմը կերեւայ ու կը բազմի նախազգեստութեան վրայ: Իրեն կրնի, անան վ. Պէտուս եւ Իրէն Գրիստ: Ատենց ետեւ քաղաքակրթութեանը իրենց տեղերը կը դրաւին, Յրէտէրիք Բասի, Ժօրէս, Երեւան, Նէլ ալ Գոստիան, Բ. Պոստէն, Մաճիւրի, Պիթաուս, խաղական պատերազմներ, Պէքսթօն, Պալքաններու անգլիական քովի կենտրոնացումը, Մաք Գօլ, Էվէնս, միս Յոնիան, անգլիական պատերազմներ, Ժ. Լոսան, պեճիքական պատերազմ, Միլիտիլ ու Սանական, Գաուս ամբարիկան, սօք. Բուստօն Լիօնի հակակական քովի կենտրոնացումներ: Պ. տը Բրէստանտէ կը կարգայ բազմաթիւ նամակներ, որոնց մէջ ակաճաւոր անձեր անձամբ ներկայ ըլլալ

չի կարենալուն համարները թիւն կը խնդրէին, եւ ի մասնաւորէ Միշէլ Պոնտի մէջ շահեկան նամակը կը կարգայ, ուր Գօլէթ ալ Յրանսի մեծահամբաւ ուսուցչապետը կը պահանջէ որ մասնաւորապէս յիշատակուի Մակեդոնիոյ դէմ յոյն-թրքական դաշնակցութեան մը լուրին ազդած վատ տպագրութիւնը ԶԵԼԼԻՆԻՆԻՐՈՒ ԳՄԱՅՈՂՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ: Յետոյ Բրէստանտէ ատենախօսութեան սկսելով մակեդ. խնդրին արդի վիճակին վրայ հակայական տեսութիւն մը կը ըսէ եւ կը պարզէ որու — աւստրիական կեղծաւոր միջամտութեան Սուլթանին կոտորածները զուգայելու անկարողութիւնը: Պ. Գրիստ իր տեւական գայրոյթով որ այնքան թրթուռն ու անանկեղծ է, կը գծէ Հայաստանի մէջ ամէն օր դործող վարագործութիւնները: Տօք. Գոստօն, Էվէնս, Մագիւրի եւ ուրիշներ կը խօսին իրենց կարգին: Պ. Ժօրէս իր սովորական ջրարեւոյթութեամբ նոր Գոստիանցութեան գովեստը կը ըսէ Յետոյ վարագործներն իրենց թիւն յայտարարութեանը անհաս շինքներ, եւ թէ խաղաղութեան, առաջինութեան եւ միջազգային յառաջդիմութեան այս նոր համախմբումին հանդէպ, Ռուսիոյ կը մնայ միայն իրենց ջողովը տեղ մը բռնել: Պ. Է. տը Գոստիան բանաձեւ մը կառավարիչ որ ամբողջութեամբ կը ղեկուարէ: Ահա այդ բանաձեւը: «Յանուն արեւելեական խնդրին որ յաւերժականորէն կը դատապարտէ Ապստիլ Համբոյի ոճիրները, հոգ. ԶՅԻՆ Ստան-Պէտուսի մէջ հաւաքուած միջազգային միջոցները, պարտք կը գնէ սէրութեանց վրայ վերջապէս վախճան մը տալու Հայաստանի եւ Մակեդոնիոյ ջարդերուն, պատասխանատու կառավարչի մը եւ իրական վերահսկողութեան մը հաստատումը: Միջոցները փակելէ առաջ Պ. Բրէ-

սանտէ ներկայիս կողմն թափուրն տիրող շնորհակալութիւնները կը յայտնէ. իսկ Ժօրէս ալ Յրէտէրիք Բասիի, որ տիրեցրական խաղաղութեան գաղափարին անդրանիկ քաղաքակրթութեան է. եւ որ, թէեւ կոյր եւ խիստ ծեր, ներկայ կը գտնուէր միջոցներէն եւ մասնաւոր շահագրգռութեամբ մը կուենկնդրէր ատենախօսութիւնները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յանձնարարութեան հարկաւոր համարեց Ռուսիոյ նահատակներու Պաշտպանութեան վերաբերմամբ սխալ տեղեկութիւնները ուղղել: Պաշտպանութեան նախաձեռնութիւնը կը պատկանի «Պարտուած» խմբագրութեան հակառակ Ռուսիոյ 82րդ. թիւին մէջ տրուած տեղեկութեանց, որոնց համեմատ այդ նախաձեռնութիւնը քանի մը անձերու վերագրուած էր: Յանձնարարութեան կը յայտարարէ նոյնպէս որ այս տարի 96ին թուրքիոյ մէջ ինկող նահատակներու յիշատակն ալ տուներու առաջարկը եկած է «Պարտուած» խմբագրութեան կողմէն: Յայտարարութիւնն օրինակ մըն ալ զրկուած է «Պարտուած»-ին: Յանձնարարութեան

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Պօլէն կը գրեն մեզ. «Անցեալ շարժում թառն ժողովը ներքէն եպիսկոպոսին առժամանակեայ պաշտօն մը տուաւ Ռուսիոյ համար, որովհետեւ

ՀԱՅԿ ԲԱՐՁՐԱՆՆԵՐԻ ԵՒ ԱՆԻ

(Շար. 559րդ թիւէն)

(Ճանապարհորդական Երեսուցիքի Տօք. Բորսալի)

Արեւը մարդ մտաւ ու օդը սկսաւ զովանալ, Կովկասեան ջրերը անխուսափելի կերպով ինձ, Ուրախ միջոցե վիզս զնս թաց էի. զգեստներս փոխելի եւ սկսայ ընկերոջս հետ կառավարին վերադարձին սուրան: Գիշերը վրայ հասաւ, բայց բարեբաղդաբար Լուսինը դուրս եկաւ ու լուսաւորեց շրջակայքը, վերը՝ մեր գլխուն վրայ: Արագած խրած էր իր ձեռնապատ գլուխը կաթնեղէն լոյսի մէջ, Արախս հարաւոր ծածկուած էր թանձր չուքով, մեր առջեւ էին կամուրջի կամարները եւ կամարին կապուած երեք ձիերը՝ կարծես գետին մէջ գամուած ու անշարժ: Մենք անհամբեր օգնութեան կրապատակինք, Ժամ մը վերջը եկաւ կառավարը իր հետ բերելով գիւղացի մը, երկու գոմէշներ եւ չուան մը: Մեծ դժուարութեամբ կարողացան չուանը կառքին չորս կողմը փակելու ու ամբարանել զոմէշներու լուծին վրայ: Այս ուժեղ անասունները ձիերուն հետ հինգ անգամ ցնցիլէ յետոյ հայիւ տե-

ղէն շարժեցին կառքը, որ մեծ ճարձատիւնով յառաջ գլորուեցաւ, առանց սակայն քիչ մը վառուելու: Յաղթական աղաղակներով եզերք քաշեցինք զայն, Գիւղացին բուպիլ մը նուէր ստանալէ վերջ ետ դարձաւ, մեր կառավարը լծեց չորրորդ ձիւն ու բռնեց կարաքիլիսէի ճարձան: Իմ քովս դեռ Երեւանի կարմիր գիւնիկն չի մը մնացած էր, գոյն իրանելով կոնեակի հետ մեր մէջ բաժնեցի: Անկողին մտնալէ առաջ իմեցինք նաեւ գիւնին, կառավարը յետոյ երջուրնցաւ, որ ալ ի՞նչ գիւնքը ջերմէն ազատեց, բայց աւելի ճիշտը, գիւնին էր, որ ջերմին առջեւ առաւ. մենք բոլորս ալ մնացինք առողջ: Երբ մենք կարաքիլիսէ հասանք, երեկոյեան ժամը ինչ էր արդէն ու ամէն ինչ քուտի մէջ: Ուանին տէրը արթնցուցինք ու հաւաքուեցանք ինքնատի (սամալի) շուրջը: Քանան իր պաշարը դուրս հանեց, այժմ կաթէ պանիր, լափալ, խաշած հաւկիթ, սոխ, սիստր, չոր միսբոլորն ալ էջմիածնէն առնուած: Հինգ մասնեղով սկսանք ուտել. յետոյ բաւական ծանր զրուխներով մը տանք անկողին, բայց արթնցանք բոլորովին գոարթ: Առաւօտուն կանուխ ճարձայ ելանք: Այս անգամ ալ անցուցինք

վտանգ մը: Մենք հիւսյ մտած էինք որոն յենապաւտը, Գետինը կազմուած էր ժայթքումներէ եւ լափաներէ զորս եկած հարթային նիւթերէ. ամէն քայլովս ի կը հանգիւյթինք խոր անդունդներու եւ քուտներու: Կառքը կը քայլէր քարեղէն մերկ եւ սեւ գետնի վրայ, Տեղ մը ճանապարհը կանչեցր այսպիսի անդունդի մը վրայէն, Զախ կողմը լեռը կը բարձրանար ձգօրէն զէպի վեր, ալ կողմը 100 մէթր խորութեամբ անդունդ մը բացած էր իր վիշապի բերանը: Անցքը նեղ էր, գետինը գետ նոր հալած ձիւնէն թաց, կառավարը մտաբանեց ձիերը, որոնք բնազդով մը զիրար ձախ կողմը կը հրէին, Մենք պատրաստ կեցած էինք, որ կառքին հաւասարակշռութիւնը կորսնցուցած վայրկեանին դուրս ցատակէինք: Բոպէ մը վերջ վտանգաւոր կէտը անցած էինք, բայց այդ միջոցին կառքին ետեւի անիւններէն մէկը ճամբէն դուրս էր ելեր եւ պարագլուխեան մէջ կախուեր, միայն կառքին արագ ընթացքը փրկած էր մեզ վտանգէն: Վերջը ես ինձ հարցուցի որ ի՞նչու կառքին վար չիջանք ու վտանգաւոր տեղը ոտքով շանցանք: Ես մի քիչ զգուշ դարձայ եւ որոշեցի բարձրավանդակին վրայ ձիով երթալ, որոշեցի բայց յաջորդ օրը նորէն չգոր-

ծաղրեցի, նորաչն գիւղին մէջ դադար առնեք: Հոս կըսկէր հայկական Շիրակ գաւառը, ընդարձակ հարթավայր մը, որ ունի 1500 մէթր բարձրութիւն: Հոս ալ յատակը թէեւ հարթային լավաներէ կազմուած է, բայց լուծուելով վերածուած է մշակութեան յարմար բարեբեր հողի: Արաքսի հովիտը եւ Արագածի հարաւակողմը ձգեցի վերջ, մենք ալ շատ քիչ պատահեցանք ծառերու: Միայն Գանձակի շուրջը տեսայ կազմաւորներ, որոնք մայիսի մէջ դեռ կանաչացած չէին, եւ արդէն ինձ շատ տեղ ըսուեցաւ, որ գարունը ուշացած էր: Նորաչն մեծ գիւղ մըն է, որու մէջ նոյն իսկ կայ գիւնտուն մը եւ նպարավաճառ մը, որու մօտ սակայն ես միայն չուաններէ, լուցիկի եւ ծխախոտէ գատ բան մը չգտայ: Գիւնտուն մէջ մեզ պատրաստեցին ձուածիկ մը: Հոս ալ տեսայ ծեր քահանայ մը՝ մաշած, բայց իրասուուն զէջքով ու մեղմ աչքերով, Ծերունին կուգէր անպատճառ մեզ իր տունը հրաբուել: Մենք ժամանակ չունէինք եւ չը համաձայնեցանք, այն ատեն հրաբուէր Հայր տունը գնաց եւ մեզ պատուելու համար գիւնի ու հաց բերաւ: Փոխադր. Մարգարէտեհի (Շարունակելի)

Արշարունի եպիսկոպոս վերջին պահուն առարկութիւններ հանելով չուզեց երթալ Ռուսներէն : Այդ պաշտօնին համար արդէն Ասլանեանէն զատ յարմարագոյն մարդ չկայ : Սրբազանը եթէ Պուլկարիոյ համար առաջնորդ ընտրուի, նախ մէկ ամիս պիտի երթայ Ռուսներէն տեղւոյն գործերը կարգադրելու և յետոյ անմիջապէս պիտի գայ Պուլկարիա, իր գործին գլուխն անցնելու : Վարչութիւնը հասանած է այս պայմանին, հետեւապէս կրնաք ապահով ըլլալ թէ Պուլկարիոյ առաջնորդութիւնը ընդունած է Սրբազանը :

«—Պատգամաւորի ընտրութեան դէմ Վասնայէն հոս պատրիարքարան զրկուած բազմատորագիր հանրագրութիւնը բռնաւ նկատողութեան չէ տանընուած :

«—Սեղրակեան եպիսկոպոս փոքր զիջումի խոստում ստացեր է Ռուսիոյ ներքին գործոց նախարարէն՝ կալուածներու գրաման մասին :»

—Աղէքսանդրիոյ մէջ հայերը միթիւնք գումարելով բողոքագիր մը պիտի գրկէին Ֆարին :

Ռուսիոյ գործակառարը Մաքսիմովի մանալով այդ՝ Հայոց եկեղեցիին գացած ու գիւանդէտներու յատուկ նենգութեամբ համոզած է հայ ջոջերը՝ ետ կենալ այդ ձեռնարկէն : Հասկանալի է, երբ ջոջերը կը համակերպին, բայց պարզապէս ոչխարամտութիւն է միթիւնքը սարքողներու կողմէ ինչալ խարբայի մը լարած ծուղակին մէջ :

Գոնէ ժողովարդը պէտք է բողոքել : Առաջնորդը լուծիւն պահած է, լուռ կենալ կը նշանակէ համաձայնիլ : Սրբազանը ի՞նչու կը լռէ, երբ իր հոգեւոր պետը, Կաթողիկոսը, ամէն կողմ բարձրաձայն հրամաններ կը զրկէ գիւմարելու տեղի շտալ առասկան խարդախ ձգտումներու :

Այո՛, Մաքսիմով կը գրէ Բեթերսպուրկ ու կատարած ծառայութեան համար Յարին արիւնտ ձեռքէն կըստանայ շքանշաններ ու կը ծիծաղի այն ապուշներուն վրայ, որոնք իրմէ խարուեցան :

Մենք կը սիրենք յուսալ, որ հոն գիտի գտնուին քանի մը առողջամիտ մարդիկ, որոնք ժողովորդին գլուխը անցնելով պիտի կապեն բողոքագիրը և այս պէս մեկ մոռցնել պիտի տան գործածուած սխալը :

Հակառակ պարագային՝ ամօթ Եգիպտոսի Հայերուն :

—Նախիջեանցի Յովհաննէս Աճլմեան կուսկած է Կ. Պոլսոյ Պատրիարքարանին 120 հազար ռուբլի, որու տոկոսը պիտի յատ-

կացուի կրթական նպատակներու :

—Վանայ կեդրոնական վարժարանը Պուլկարիոյ մասնաւոր հոգածութեան առարկայ գարձած է : Անձերու և վաճառականական տուներու կողմէ հոն միշտ նուէրներ կը զրկուին :

—Մեզ կը գրեն, որ ճապարհչուր գաւառի Արծուիկ գիւղացի Տ. Յակոբ քահանան Սուլիմայի մէջ պաշտօնի կոչուած է :

—Ճեղի սղութեան պատճառաւ սգահանդէսի ազդարարութիւնը այս անգամ չկրցանք գնել :

—Լօնտօնի ոստիկանութիւնը նաէն ելած միջոցին ձերբակալած է Վահան Գրիգորեան անուն անձ մը և կը մեղադրէ զայն իբր մեղսակից Սագունիի սպանման գործին մէջ : Հայր բողոքած է այս ամբաստանութեան դէմ և յայտնած, որ ինք յեղափոխական կուսակցութիւններու չի պատկանիր :

—Գալիցիին վրայ սպանութեան փորձ կատարողները եղած են Յ Հայեր, որոնցմէ մին անմիջապէս գնդակահար սպանուած է, միւսը ծանր վիրաւորուած, երրորդը չէ փաստուած : Հայակեր գազանը դժբաղդաբար միայն թեթեւ կերպով վիրաւորուած է զլիւնէն :

—Տեղւոյս Հոգաբարձութեան ընտրութիւնը յետաձգուած է :

**ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

Անցեալ կիրակի ամբողջ Պուլկարիոյ մէջ տեղի ունեցաւ երեսփոխանական ընտրութիւնը : Հակառակ կանխապէս շրջող զըրոյցներուն, գրեթէ ամէն կողմ ընտնութիւնները կատարուեցին առանց ծանր միջադէպերու և կատարեալ հանգարտութեամբ : Ինչպէս արդէն յայտնի է, ամբողջ ընտրական պայքարը երկու սղատ կուսակցութեան մէջ կը մղուէր : Մին կառավարականը, որ կազմուած էր Ստամպուլի լուսններէ և Լիպէնալներէ, և ընդգիւմարիները, որոնք կազմուած էին նարոտնեաքներէ, տիմօքրատներէ և ցանքովիստներէ :

Հասած վերջին տեղեկութեանց համաձայն, 189 երեսփոխանական ընտրելիներէն 148ը կառավարականները շահած են : Այս պատկառելի մեծամասնութիւնը չի տեսնուած յաղթանակ մը կը նկատուի Պուլկարիոյ մէջ : Դիտելու կէտ մըն ալ այն է որ կառավարականները յաղթանակ տարած են գրեթէ բոլոր կարևոր քաղաքներուն մէջ, ինչպէս՝ Սօֆիա, Սթ. Չախորա, Եմուլա, Բլէվէն, Ռուսչուք, Վառնա, Յիլիպէ եւայլն : Արդի նախա-

րարներէն Բէթրով երեք տեղէ, Իէթրով Հինգ տեղէ, Բորով երկու, Կէնայիէվ երեք և Շիշմանով երեք տեղերէ ընտրուած են :

«Հաւաստիկ ընտրութեանց ամբողջ արդիւնքը՝

- 148 կառավարական
- 20 նարոտնեանք
- 7 տիմօքրատ
- 5 ցանքովիսթ

Ընդգիւմարիներու կողմէ ընտրուած է Տանէվ : Սանքով չէ ընտրուած : Բոլոր նախարարները ընտրուած են : Կրտսի թէ Պուլկարիոյ ազատութենէն իվեր այսքան խաղաղ և առանց միջադէպի ընտրութիւն չէր կատարուած : Վառնայէն ընտրուած են կառավարական Տօք. Փօստա Ռանքով և Լ. Բայաքով :

—Պուլկարական շրջաններու մէջ Մակեդոնիոյ նոր ծրագրին մեծ կարեւորութիւն չեն տար :

—Կառավարութիւնը հերքեց այն լուրը՝ թէ ընտրութեանց ամբիւ յեղափոխութիւն պիտի ծագի : Նոյնպէս հերքուեցաւ Մակեդոնացի գաղթականներու պուլկարիական թուրքերու վրայ յարձակելու լուրը :

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ե՛կմէնի մէջ ծագած է ապրտամբութիւն : Ապստամբները գալեր են Սանա գլխաւոր քաղաքին վրայ : Իզմիրէն չուտով այն կողմերը զրկուեցին Յ գունդօրք : Թրքական շրջանակներ կը կարծեն, որ Անգլիոյ դրոշմով ապստամբած են Արապները :

—Ռուսական «Լուսօթիւթ» թերթը կը կարծէ, որ Սուլթանը գաղտնի կերպով քաջալէրուած այս կամ այն պետութենէն չպիտի ընդունի և կամ թէ ընդունի չպիտի գործագրէ բարենորոգմանց ծրագիրը, ուստի արեւելեան խնդրին վերջ մը տալու համար, լաւ կընեն Պեռլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնները համաժողով մը գումարել և միաձայն վճիռ մը կայացնել յօգուտ տանջուող ազգերու : Իսկ հակառակ պարագային պետութիւնները արդելք հանգիստանալ չեն, երբ ազգերը կը գիմեն ինքնապաշտ պանութեան :

—Արտաքին գործոց նախարարը Սուլթանի կողմէ ներկայացաւ երկու պետութեանց դէսպաններուն և յայտնեց թէ ծրագրի առաջին երեք կէտերը չեն կարող Ք. Դրան կողմէ ընդունուիլ, պէտք է զանոնք փոփոխութեան ենթարկել : Դէսպանները տուին մերժողական պա-

տախան : Երևաղի մէջ կը կայանան նախարարական ժողովներ : Բայց նախարարները նոր ծրագրին հանդէպ իրենց բռնելիք գիրքը դեռ չեն որոշած :

—Երկու պետութեանց դէսպանները ստացան անստորագիր և սպանալիքներով լի նամակներ : Այս Սուլթանի պաշտօնեաներուն մէկ խաղն է, անոնք կուզեն հաւաստացնել որ իսլամները թոյլ չպիտի տան դործագրել նոր ծրագիրը :

**ՅՐԱՆՍԱ**

Յարը Լուպէին զրկած է անձնական ձեռագրով նամակ մը, որու մէջ նա յայտնած է իր ուրախութիւնը Յրանսայի, Իտալիոյ և Անգլիոյ հետ մերձեցման ամբիւ, ընդունելով այս մերձեքումը իբր հաւաստիք ընդհանուր խաղաղութեան :

Երեւի ծայրագոյն Արեւելքի մէջ Ռուսիա պէտք ունի Յրանսայի աջակցութեան : Մեզ արդէն յայտնի է սպիտակ Սարի խաղաղասիրական տրամագրութիւնը : Հայաստան և Յիւլիանտիա անոր խաղաղասիրութեան զոհերն են :

**ՍԱԳՈՒՆԻ ՍՊԱՆՆՈՒՄԸ**

Սագունիի սպանութիւնը կատարուած է Լօնտօնի արուարձաններէն միոյն մէջ :

Ձուհը նազարեգի վրայ եղած սպանութեան փորձին վերաբերեալ խնդիրները քննելու համար Ձուիցերիա գացած էր Վերադարձին իրեն հետեւած է մարդասպանը մինչեւ Լօնտօն : Ծանապարհորդութեան միջոցին նա երեքը հայերէն չէ խոսած :

Սագունի իր տան դռնէն ներս մտած ատեն շարագործը 4 անգամ կրակած ու անհնաացած է : Սագունի զարնուած է սրտէն և անմիջապէս մեռած :

Մանրամասնութիւններ յաջորդով :

**ՆՈՄԱԿԱՏՈՒՓ**

Վլէննա. Պ. Լ. Մ.—Թերթիս խմբագրապետը ժամանակի մը համար մեկնած է այս տեղէն :

—Պ. Էմիլ Եղարշեանք.—Եր նորհակալութիւն, կըսպասեմ ձեր յօդուածներուն : Գրեցե՛ք նաեւ գիտութեան, ձեր մասնագիտութեանէն՝ ժողովրդի համար և ժողովրդի լեզուով :

**ՍՏԱՅԱՆՔ**

Ս. Էրլիսածին փառակազմ գրքոյկը : Հրատարակութիւն Վլէննայի Մերթարեանց : Գինն է 2,5 ֆրանք :

Отговорникъ  
Мурадъ-Браносянъ  
Печатница „Взаимность“ Варш